ՈԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/6 ծածկագրով շրջանակային
համաձայնագրի գրանցված բոլոր մասնակիցներին

«ԵՐԵՎԱՆԻ ԷԼԵԿՏՐԱՏՐԱՆՍՊՈՐՏ» ՓԲԸ-ի

կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու **տարբեր տեսակի** յուղեր և մարտկոցներ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպած ՈԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/6 ծածկագրով շրջանակային համաձայնագրի շրջանակներում:

Գնման գործընթացին մասնակցելու համար Ձեր կազմակերպության հայտը անհրաժեշտ է ներկայացնել ք.Երևան, Բագրատունյաց 44 հասցեով մինչև 2014թ. փետրվարի 20-ը ժամը 15:00

Հայտը , որը կազմված է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումից և գնային առաջարկից, պետք է կազմված լինի **ՈԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/6 ծածկագրով շրջանակային համաձայնագրի ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան:**

:

Մասնակցի կողմից հայտ ներկայացնելը պարտադիր չէ:

Շրջանակային համաձայնագիր կնքած անձը չի կարող ներկայացնել մեկից ավելի գնային առաջարկ, գնային առաջարկների հավասարության դեպքում ոչ գնային պայմանները բավարար գնահատված մասնակիցների հետ գները նվազեցնելու նպատակով կկազմակերպվեն միաժամանակյա բանակցություններ:

Գնային առաջարկը ներկայացվում է առարկայի մեկ միավորի համար: Գնային առաջարկը ներառում է ինքնարժեք, շահույթ և անուղղակի հարկեր ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկ:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

(Եթե , Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով ՀՀ նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ՝ լրացուցիչ փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

-նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման կարգը և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները.

-նման պահանջի դեպքում մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով /ծանուցումով/՝ հղում կատարելով ՀՀ նորմատիվ իրավական ակտի համապատասխան /կոնկրետ/ դրույթին՝ ի կատարումն որի պահանջվում է լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները):

Տնօրեն՝ *Հ.Երեմյան*